

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ  
ՔԱՐՈՋԷ ԿԼԷՆՏԵՅԼԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Յունուար 24ին Առաջնորդ Սրբազան Հայրը այս տարուան առաջին հովուական այցելութիւնը շնորհեց Կլէնտէյլի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ, Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց:

Սուրբ Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Վազգէն Քինյ. Մովսէսեան եւ Սարկաւազները:

Արարողութեան աւարտին Թալին Սեհրապեան Սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ուր հաւատացեալները առիթը ունեցան զրուցելու Սրբազան Հօր հետ եւ ստանալու իր օրհնութիւնները: